



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԳ. ՏԱՐԻ. ԹԻԻ 15.

1855

ՕԳՈՍՏՈՍԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զոյգ մը հողաբախներ :

Պաղտատու մէջատենօք լսու-Վա-
սըմ յամբուրի անունով ծեր վաճառա-
կան մը կար, որ թէպէտ շատ հարուստ,
բայց ագահութեան կողմանէ աղէկ ա-
նուանի էր: Հագած զգեստները վերէն
վար անանկ կարկրտան էին, որ նորը
ինչ նիւթէ ըլլալը չէիր կրնար ճանչնալ.
գլուխը փաթ թած փակեղին գոյնը՝ աղ-
տոտութենէն ու հնութենէն բոլորու-
վին կորսուած էր: Բայց հողաթափնե-
րը ամենուն ալ կը յաղթէին. այնպի-
սի կարգէ դուրս բաներ էին, որ կ'ար-
ժէր հետաքրքիրները երթային տես-

նէին: Եւ ահա ասոնց ներքանին վրայ
մեծ մեծ հասակէկ գամեր գամուած
էր, ու երեսները այնչափ մէջէ մէջ
կտորներէ ձեւացած էին, որ լքուսի
նաւը իր վրան այնչափ կտոր չունէր:
Լսոնք տասը տարուան հնութիւն էին.
այնպէս որ Պաղտատու ճարտար հը-
նակարկատ կօշկակարները՝ հանձար ու
արուեստ կը յոգնեցընէին այս հողա-
թափները կարկրտելու ատեն, որ ա-
սոնց մնացած կտորները կարենան ի-
րարու հետ յարմարցընել, ինչու որ քո-
վէ քով բերուելու բաներ չէին: Եւ

կով անանկ մը ծանրացեր էին այս հողաթափները, որ մինչև առակի առնուած ամենուն բերանը կը պտըտէին. երբոր մէկը ուզէնար բանի մը արտաքոյ կարգի ծանրութիւնն իմացնել, Լպու-Վասըմին հողաթափներուն հետ կը բաղդատէր :

() ր մը Լպու-Վասըմ քաղքին շուկան պտըտելու ատեն՝ կ'առաջարկէն իրեն խել մը բիւրեղ որ գնէ . ինքն ալ շուտով մը հաւանեցաւ ու մէկէն գնեց, որովհետեւ ուզած գնովը գտաւ զանոնք : Վանի մը օրէն վերջն ալ լսելով որ առնուհասոտ նիւթեր ծախող մը սնանկացեր է, ու բոլոր մնացած յոյսը իր քովի խել մը վարդեջուրը ծախելուն վրայ է, այն խեղճ մարդուն դժբաղդութիւնը իրեն բանի բերաւ . վազեց գնաց այն վարդեջուրը կէս գնով գնեց . և ասանկ օգտակար առուտուրէ մը սիրտը բացուելով՝ իր բարեկամներուն հարկինք մը պիտի ընէր, ինչպէս արեւելք սովորութիւն է վաճառականներուն մէջ . բայց ետքը աւելի լաւ ու հարկաւոր սեպեց բաղնիք մը երթալ, որովհետեւ խիստ շատ ատենէ 'ի վեր հոն ոտք կոխած չունէր :

Եւ մտնայ բաղնիք, ու զգեստը հանուելու ատեն՝ իր բարեկամներէն, կամ գոնէ իր բարեկամ կարծածներէն մէկը (որովհետեւ շատ դժուարին է որ ազահ մը բարեկամ ունենայ) քովը մօտեցաւ ու յորդորեց զինքը որ այն հին հողաթափները մէկդի նետէ, պատճառ բերելով որ Բոլոր քաղաքը վրադ կը խնտան ու կը խօսին : — Բէկ ըսիր, կը պատասխանէ Լպու-Վասըմ, ես ալ խել մը ատեն է որ կը մտածեմ զանոնք նետելու . բայց կը տեսնեմ ալ որ դեռ անանկ բոլորովին նետուելու բաներ չեն : Եւս կ'ըսէ, ու զգեստը կը հանէ բաղնիք կը մտնէ :

Երբոր ինքը կը լուացուէր, Պաղտատու դատաւորն ալ լուացուելու եկաւ նոյն բաղնիքը . բայց Լպու-Վասըմ առաջուց մտած ըլլալով՝ առաջ ալ դուրս ելաւ . մտաւ այն առջի խուցը, ու զգեստները հագաւ . բայց տեսնէ

որ իր հին հողաթափներուն տեղ՝ զոյգ մը նոր հողաթափ դրեր են . ու ապահով ըլլալով, որովհետեւ ասանկ կը փափաքէր, թէ անոնք իր այն բարեկամին ընծաները պիտի ըլլան, որ քիչ մը առաջ խրատեր էր զինքը, ուրախութեամբ առաւ հագուեցաւ ոտուրները այն գեղեցիկ հողաթափները, ու խընտումէն ինքիրմէն դուրս ելած՝ որ անոնք նոր հողաթափ գնելու հոգը վերուցին իր վրայէն, բաղնիքը թողուց ու իր բանը գնաց :

Վիչ մը ետքը դատաւորն ալ լուացուելէն ելաւ . ծառաները մէկէն սկըսան իրենց տիրոջը հողաթափները փընտրուել, և զոյգ մը աղտոտ ու այլանդակ հողաթափ ձեռքերնին մնաց . մէկէն իմացուեցաւ թէ ասոնք Լպու-Վասըմին են . նոյն վայրկենին դռնապանները ետեւէն վազեցին, վրան հասան ու գողի պէս բռնած իշխանին առջև բերին : Իշխանը այս յանցանքին համար բանտ դնել տուաւ զինքը . Վասըմ արդարութեան ձեռքէն խալըսելու համար բռնի հարկադրուեցաւ քսակին բերանը բանալու, և որովհետեւ շատ հարուստ սեպուած էր, նոր հողաթափներուն գինը շատ սուղի նստաւ իրեն :

Վասըմ տրտմութեամբ հողաթափները ձեռքը տուն դարձաւ, ու բարկութենէն նետեց զանոնք Տիգրիս գետին մէջ, որն որ անմիջապէս տանը առջևէն կ'անցնէր : Վիչ օր վերջը քանի մը ձկնորսներ ուռկանին վեր քաշելու ատեն՝ արգելք ու ծանրութիւն մը կը զգան . Բիչ ըլլայ մէջը . Լպու-Վասըմին հողաթափներն են եղեր . և ասոնց խոշոր խոշոր գամերը գացեր ուռկանին ծակերը պատուտեր են : Ձկնորսները սաստիկ բռնկեցան Վասըմին ու անոր հողաթափներուն դէմ, ու առին զանոնք կատաղութեամբ մը Վասըմին պատուհաններէն ներս նետեցին . այս նետուածքով անանկ ուժով մը ներս ցատքեցին հողաթափները՝ որ գացին զարնուեցան վարդեջուրի շիշերուն, որոնք դարանին վրայ կարգաւ շարուած էին, ու բոլոր շիշերը

Ջախջախելով՝ վարդեշուրը փճացուցին :
Եւ ո՛վ կրնայ մահաբերել Վասըմին
կրած ցաւը՝ երբոր այս դժբաղդու
թիւնը տեսաւ . սկսաւ մօրուքը փետ
տել, ու սիրտը այրած՝ կը պոռար . “ Եւ
նիծեալ հողաթափներ, ա՛լ մէյ մըն ալ
կրնաք նէ ինձի փնաս հասուցէք ,” . ա.
սանկ ըսելով՝ վազեց բահը ձեռքը ա.
ռաւ ու պարտէզին մէջ հողը փորեց որ
ասոնք գետինը թաղէ :

Իսանկ փորելու ատենը՝ Վասըմին
դրացիներէն մէկը, որ շատոնցունէ ՚ի
վեր թշնամի էր հետը, տեսաւ զինքը .
ու մէկէն վազեց քաղաքապետին ամ
բաստանեց զանիկայ, ըսելով որ Վա.
սըմ պարտիզին մէջ գանձ մը թաղեց .
Խշխանը այս ըսելուն պէս՝ սիրտը ցան
կութեամբ աղէկ մը վառուեցաւ, ու
բոլոր բոլոր այս վկայութեամբ գոհ ըլ
լալով՝ շուտ մը դիմացը բերել տուաւ .
թող Վասըմ ուզածին չափ ըսէ ու ըսէ
որ գանձ անունով բան ամենեւին չէր
թաղած, հապա պարզ իր հողաթափ
ներն էին . բայց բոլոր ըսածները պա
րապ, որովհետեւ քաղաքապետը անոր
ստրկին վրայ աչք ունէր, ու ինչպէս որ
ըլլար ձեռքէն բան կ’ուզէր փրցընել .
վերջապէս խեղճ Վասըմ խել մը ստակ
անոր ձեռքը դնելով՝ հազիւ ազատեցաւ :

Ա երջը վերջը ճարը կը հատնի, կ’առ
նէ հողաթափները քաղաքէն հեռու
ջրմուղի մը մէջ կը նետէ՝ ամէն գիտցած
յիշոցները վրանին տալով . և ա՛լ միտ
քը դրաւ որ ասոնց ձեռքէն խալըսե
ցաւ : Բայց այս ալ չէղաւ . սատանան
դեռ կ’ուզէր հետը խաղալ, անոր հա
մար հողաթափները ջրին ընթացքին
հետ մէկտեղ եկան ագուգային բերա
նը թխմեցին, ու ջրին վազքը արգի
լեցին : Բղբուրներու վերատեսուէները
շուտով վազեցին որ փնասին դարմանն
ընեն : Ի՛նչ մ’ ալ ինչ տեսնեն . Վասը
մին հողաթափները . կ’առնեն զանոնք
ու քաղաքապետին կը բերեն՝ ամբաս
տանելով որ բոլոր փնասուն պատճառը
Վասըմն է : Ողորմելի Վասըմը նորէն
բանտ կը դրուի ու առջիներէն աւելի
մեծ տուգանք մը կը կրէ : Վատաւորն

որ արժանի պատիժը տալէն վերջը՝ ու
րիշին բանը քովը չէր պահեր, նորէն
իրեն դարձուց հողաթափները :

Վասըմ տեսնելով որ հողաթափնե
րը իրեն գլխուն դեռ շատ փորձանք
պիտի բերեն, միտքը դրաւ որ այրէ
զանոնք . բայց որովհետեւ օրերով ջրին
մէջ մնալուն՝ սաստիկ թրջեր էին,
անոր համար տանը տանիքին վրայ դը
րաւ որ արեւէն չորնան : Սակայն բաղ
դը դեռ ամէն տանջանք գլուխը չէր
թափած, ու դեռ ուրիշ մըն ալ կար,
որ ամենէն աւելի սաստիկ էր : Վրա
ցին մէկուն շունը տեսնելով այս հո
ղաթափները՝ կեցած տանիքէն հոն կը
ցատքէ, ու ասոնց մէկը բերանն ա
ռած հետը խաղալու ատենը՝ վերէն
վար կը ձգէ . հողաթափը շիտակ գը
նաց յղի կնկան մը գլուխը ինկաւ, որ
տանը դիմացէն կը քալէր : Խեղճ կըն
կան վրայ վախն ու հարուածը մէկ
տեղ գալով՝ արգանդին սաղմը կ’անցը
նէ : Կնկան էրիկը բանը իմանալով՝
դատաւորին ինկաւ . Վասըմին գլուխը
նոր տուգանք մըն ալ բռնուաւ, որ եղա
ծին տեղը կը բռնէր :

Խեղճ Վասըմ, ճարը հատած՝ հո
ղաթափները մէյմէկ ձեռքը առաւ,
գնաց դատաւորին դիմացը ելաւ, և ա
նանկ աղղու ու սաստիկ ձայնով մը խօ
սեցաւ, որ դատաւորին իմտալը կու
գար . “ Եհաւաստիկ այս մահացու մեքե
նաներն են իմ բոլոր թշուառութեանցս
պատճառը . իրաւցընէ կ’ըսեմ՝ այս անի
ծեալ հողաթափներն են որ վերջապէս
մոխրի վրայ նստեցուցին զիս : Խնդրեմ,
տէր իմ, կ’աղաչեմ որ հրովարտակ մը
հանես որ ասկէց վերջը մարգիկ չկարե
նան զիս ամբաստանել այս անիրաւ հո
ղաթափներուն ըրածին պատճառաւ ,” :
Ինչունեցաւ դատաւորը իրեն խնդիւ
քը . և ասանկով Վասըմն ալ այսչափ
փնաս քաշելէն ետքը լաւ մը խրատուե
ցաւ ու սորվեցաւ որ երբ հողաթափնե
րը հիննան՝ պէտք է եղեր փոխել :